ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

# 0515 «ԶԱՐԴԱԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՈՍԿԵՐԻՉ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

(ազգանուն, անուն)

«   »       200  թ.

Ուսումնական հաստատության անվանումը

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«Ոսկերիչ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 0515 «Զարդակիրառական արվեստ»

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ **նախնական մասնագիտական /արհեստագործական/**

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՝ **Ոսկերիչ**

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ **միջնակարգ /լրիվ/ ընդհանուր**

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ **1 տարի**

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ **առկա**

## I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Կուրսը | սեպտեմբեր | | | | 27.09 5.10 | հոկտեմ | | | 27.10 2.11 | նոյեմբեր | | | | դեկտեմբեր | | | | 29.12 4.01 | հունվ. | | | 26.01 1.02 | փետրվ | | | 23.02 1.03 | մարտ | | | | 30.03 5.04 | ապրիլ | | | 27.04 3.05 | մայիս | | | | հունիս | | | | 29.06 5.07 | հուլիս | | | 27.07 2.08 | օգոստոս | | | | II. ժամանակի բյուջեն /շաբաթներով/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | | 6 12 | 13 19 | 20 26 | | 3 9 | 10 16 | 17 23 | 24 30 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | | 5 11 | 12 18 | 19 25 | | 2 8 | 9 15 | 16 22 | | 2 8 | 9 15 | 16 22 | 23 29 | | 6 12 | 13 19 | 20 26 | | 4 10 | 11 17 | 18 24 | 25 31 | 1 7 | 8 14 | 15 21 | 22 28 | | 6 12 | 13 19 | 20 26 | | 3 9 | 10 16 | 17 23 | 24 31 | Տեսական ուսուցում | Մոդուլների ամփոփում | Պրակտիկա | Ամփոփիչ պետական ատեստավ. նախապ. | Ամփոփիչ պետական ատեստավորում | Արձակուրդ | ընդ ամե նը |
| 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | : | = | = | | | | | | | | | | | | | ◊ | ◊ | ◊ | ◊ | : | X | X | X | X | ▲ | I | = | = | = | = | = | = | = | = | 27 | 2 | 11 | 1 | 1 | 10 | 52 |
| 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | 0 | ◊ | X | : : | ▲ | III | = |
|---|---|---|---|---|---|---|---|
| Տեսական ուսուցում | Ուսումնա-կան պրակտիկա տեսական ուսուցմամբ | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | Նախաավարտական, արտադրական պրակտիկա | Մոդուլների ամփոփում | Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման | Ամփոփիչ պետական ատեստավո-րում | Արձակուրդ |

# III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

| N | Առարկաների անվանումը և մոդուլները | Ատեստավորում ըստ կիսամյակների | | | Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ) | | | | Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Պարտադիր լսարանային բեռնվածություն | | | | 1-ին կուրս | | 2-րդ կուրս | | 3-րդ կուրս | |
| | | | | | | Այդ թվում | | | | | | | | |
| | | Քննութ. | Ստու-գարք | Կուրս. աշխ. | Ընդա-մենը | Տեսակ. ուսուցում | Լաբոր. և գործն. աշխ | Սեմինար պարապ-մունք | 1-ին կիս. շաբ | 2-րդ կիս. շաբ. | 3-րդ կիս. շաբ. | 4-րդ կիս. շաբ. | 5-րդ կիս. 15 շաբ. | 6-րդ կիս 12 շաբ. |
| 1. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 1.1 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 5;6տ | | 72 | 54 | 18 | | | | | | 36 | 36 |
| 1.2 | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 6տ | | 18 | 14 | | 4 | | | | | | 18 |
| 1.3 | Իրավունքի հիմունքներ | | 6տ | | 36 | 26 | 6 | 4 | | | | | | 36 |
| 1.4 | Պատմություն | | 5տ | | 36 | 28 | | 8 | | | | | 36 | |
| 1.5 | Օտար լեզու | | 5;6տ | | 60 | 42 | 18 | | | | | | 36 | 24 |
| 1.6 | Ֆիզիկական կուլտուրա | | 5;6 | | 54 | | 54 | | | | | | 30 | 24 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 276 | 164 | 96 | 16 | | | | | 138 | 138 |
| 2. | ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 2.1 | Էկոլոգիայի հիմունքներ | | 5տ | | 36 | 30 | 6 | | | | | | 36 | |
| 2.2 | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 6տ | | 18 | 18 | | | | | | | | 18 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 54 | 48 | 6 | | | | | | 36 | 18 |
| 3. | ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | | | | | | |
| 3.1 | Հաղորդակցություն | | 5տ | | 36 | 10 | 26 | | | | | | 36 | |
| 3.2 | Համակարգչային օպերատորության հիմունքներ | | 5տ | | 54 | 12 | 42 | | | | | | 54 | |
| 3.3 | Անվտանգություն և առաջին օգնություն | | 5տ | | 36 | 20 | 16 | | | | | | 36 | |
| 3.4 | Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ | | 6տ | | 54 | 24 | 30 | | | | | | | 54 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 180 | 66 | 114 | | | | | | 126 | 54 |
| 4. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | | | | | | | | | | |
| 4.1 | Մասնագիտության ներածություն | | 5տ | | 18 | 8 | 10 | | | | | | 18 | |
| 4.2 | Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում | | 5տ | | 18 | 6 | 12 | | | | | | 18 | |
| 4.3 | Աշխատատեղի մաքրում, գործիքների դասավորում, կատարված աշխատանքի հանձնում | | 6տ | | 18 | 4 | 14 | | | | | | | 18 |
| 4.4 | Ոսկերչական իրի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների պատրաստում գլոցման և լարաձգման եղանակով: | | 5տ | | 24 | 2 | 22 | | | | | | 24 | |
| 4.5 | Ոսկերչական իրի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների և մանրակների պատրաստում փականագործական աշխատանքների եղանակով: | | 5տ | | 72 | | 72 | | | | | | 72 | |
| 4.6 | Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում դրոշմման եղանակով: | | 5տ | | 24 | 8 | 16 | | | | | | 24 | |
| 4.7 | Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում ձուլման եղանակով: | | 5տ | | 36 | 4 | 32 | | | | | | 36 | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.8 | Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում հյուսվածքային տեխնիկայի /ֆիլիգրան/ եղանակով: | | 5տ | | 36 | 4 | 32 | | | | | | 36 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **246** | **36** | **210** | | | | | | **228** | **18** |
| **5.** | **ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ** | | | | | | | | | | | | | |
| 5.1 | Շինվածքի հավաքում | | 6տ | | 36 | | 36 | | | | | | | 36 |
| 5.2 | Ոսկերչական իրի ընթացիկ մշակում | | 6տ | | 24 | 2 | 22 | | | | | | | 24 |
| 5.3 | Ոսկերչական իրի վերջնական մշակում և նախշազարդում | | 6տ | | 36 | | 36 | | | | | | | 36 |
| 5.4 | Ոսկերչական քարերի տեղադրում | | 6տ | | 36 | 8 | 28 | | | | | | | 36 |
| 5.5 | Վերանորոգման աշխատանքներ | | 6տ | | 36 | | 36 | | | | | | | 36 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **168** | **10** | **158** | | | | | | | **168** |
| **6.** | **ԸՆՏՐՈՎԻ** | | 6տ | | 36 | | | | | | | | | 36 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **36** | | | | | | | | | **36** |
| | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ** | | 5տ | | 12 | | | | | | | | 12 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **12** | | | | | | | | **12** | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **972** | **324** | **584** | **16** | | | | | **540** | **432** |
| | **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | 100 | | | | | | | | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | | | | | 36 | 36 |

| | IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | |
|---|---|---|---|
| 1 | Վարվելակերպի հիմունքներ | | |
| 2 | Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ | | |
| | **V. ՊՐԱԿՏԻԿԱ** | Կիսամյակ | Օրեր |
| | Ուսումն. «Համաձուլվածքի պատրաստում» | 5 | 1 օր |
| | Ուսումն. «Գլոցում, լարածգում» | 5 | 2 օր |
| | **Ուսումն. Փականագործական եղանակով պատրաստում»** | 5 | 6 օր |
| | Ուսումն. «Դրոշմման եղանակ» | 5 | 2 օր |
| | Ուսումն. «Ձուլման եղանակ» | 5 | 2 օր |
| | Ուսումն. «Հյուսվածքային տեխնիկայի եղանակ» | 5 | 6 օր |
| | Ուսումն. «Շինվածքի հավաքում» | 6 | 7 օր |
| | Ուսումն. «Ընթացիկ մշակում» | 6 | 2 օր |
| | Ուսումն. «Վերջնական մշակում» | 6 | 6 օր |
| | Ուսումն. «Ոսկերչականշն քարերի տեղադրում» | 6 | 8 օր |
| | Մասնագիտական պրակտիկա | 6 | 24 օր |
| | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 11 շաբ |

**VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ**

Ավարտական աշխատանքի կատարում — հունիսի 22-28-ը
Ավարտական աշխատանքի պաշտպանում — հունիսի 29- հուլիսի 4-ը

| N | VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ |
|---|---|
| | **ԿԱԲԻՆԵՏՆԵՐ** |
| 1 | Մասնագիտական տեխնոլոգիայի և նյութաբանության, |
| 2 | Նկարչության, կոմպոզիցիայի և տեխնիկական գծագրության, |
| 3 | Քանդակագործության, |
| 4 | Անհատական համակարգիչների, |
| 5 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների |
| 6 | Օտար լեզվի |
| 7 | Աշխատանքի անվտանգության |
| 8 | Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների |
| | |
| | |
| | **ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ** |
| 1 | Քիմիայի |
| 2 | Ֆիզիկայի |
| | |
| | **ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ** |
| 1 | Ընդհանուր ոսկերչական |
| 2 | Ձուլման և մաքրման |
| | |
| | **ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ** |
| | |
| | |

# VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքները, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:

   Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** ԸԱՀ-3-08-001

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

դասախոսություն 16 ժամ

գործնական պարապմունք 20 ժամ

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.**
2. **դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.**
3. **տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.**
4. **իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.**
5. **դրսևորի քննադատական մտածողություն.**
6. **կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:**

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.

բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.

գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).

դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝</u>

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան դրույթներից: Ուսանողից կպահանջվի կազմել ինքնկենսագրություն (CV) և լրացնել աշխատանքային թերթիկի, աշխատանքի ընդունման ու դրանից ազատման դիմումի ձևեր: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են դերային խաղեր: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.

բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.

գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.

դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

- Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

  Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 2 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.

գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,

դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.

զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողից կպահանջվի ներկայացնել կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները: Ուսանողին կառաջադրվի պրոբլեմային աշխատանքային իրավիճակ և կպահանջվի առաջարկել լուծումների տարբերակներ: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 2 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 4. **Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.

բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ</u>

Ոսանողին կներկայացվի ղեկավարի հետ հարաբերակցվելու որևէ իրավիճակ և կպահանջվի ներկայացնել պահաջվող վարքագիծը: Կտրվեն հարցեր իր և ղեկավարի իրավունքների ու պարտականությունների մասին: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցանումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 5. **Դրսևորել քննադատական մտածողություն:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.

բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.

գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ</u>

Ուսանողին կներկայացվի որոշակի իրավիճակ կամ խնդիր և կպահանջվի, որ նա իրականացնի տվյալ օրինակի առողջ և կառուցողական քննադատություն: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ</u>

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 6 ժամ |

ԱՐԴՅՈՒՆՔ 6. **Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).
գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:
դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,
ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.
զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի կազմել սահմանած ժամկետում որոշակի աշխատանք կատարելու գործողությունների պլան: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն աշխատանքային իրավիճակների օրինակներ՝ սթրեսի կանխարգելման և դիմակայման գիտելիքները ստուգելու նպատակով: Ուսանողին կներկայացվի մի քանի պրոբլեմային և կոնֆլիկտային իրավիճակ՝ դրանց նախապայմաններով: Կպահանջվի, որ նա արագ կողմնորոշվի, ուսումնասիրի դրանց պատճառները, բացահայտի դրանք, առաջարկի կանխարգելիչ միջոցներ և տա արագ ու արդյունավետ լուծումներ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** **ԱՅՀ-3-08-001**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 18 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 18 ժամ |

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **սահմանի ուսումնառության անձնական նպատակները.**
2. **բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.**
3. **նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.**
4. **մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.**
5. **կատարի փաստաթղթավորում:**

**Գնահատման կարգը՝**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,

բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,

գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 2 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,

բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,

գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,

դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 2 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝

– պարզաբանումներ ստանալու ձգտումը,
– գրառումներ կատարելը,
– ամփոփելը,

բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,

գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,

դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,

բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.

գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,

բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,

գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** **ԱԱՕ3-08-001**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական աշխատանք 16 ժամ

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **իմանա աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.**
2. **իմանա անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում.**
3. **իմանա արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.**
4. **ցուցաբերի առաջին օգնություն:**

**Գնահատման կարգը** Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.

բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.
դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.
զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:
Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական ուսուցում 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում:**

КАТАРМАН ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.
բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.
գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.
դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:
Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.
բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.
գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.

դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի և սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչները.

ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
- ջերմաստիճանը
- հարաբերական խոնավությունը
- փոշու առկայությունը

բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
- օդափոխություն
- ջեռուցում
- ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 6 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.

բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.

գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.

դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.

ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.

զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

| | |
|---|---|
| Տեսական ուսուցում՝ | 2 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 6 ժամ |

## <u>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</u>

**Մոդուլի դասիչը՝** **ԸԱՀ-3-08-001**

Մոդուլի տևողությունը 54 ժամ՝
Տեսական ուսուցում՝ 24 ժամ
Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

7. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
8. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
9. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
10. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
11. դրսևորի քննադատական մտածողություն.
12. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

**Գնահատման կարգը**Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բնավոր ներկայացնում իր կենսագրությունը:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.

բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.

գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.

դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 3 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.

գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,

դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարրություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.

զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.

բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 2ժամ

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Դրսևորել քննադատական մտածողություն:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.

բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.

գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 3 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).

գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:
դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,
ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.
զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

**ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝ SS 3 - 08 - 001**

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ
Տեսական ուսուցում 12 ժամ
Գործնական աշխատանք 42 ժամ

**Մուտքային մակարդակը՝** Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. **կիմանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,**
2. **կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,**
3. **կկարողանա պահպանել փաստաթուղթը,**
4. **կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,**
5. **կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,**
6. **կկարողանա տպագրել փաստաթուղթը:**
7. **կունենա ինտերնետում աշխատելու իմացություն**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

- *իմանալ* Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- *բացել* նոր փաստաթուղթ
- ստեղնաշարի օգնությամբ *մուտքագրել*
    - տեքստ (առանց ֆորմատավորման)
    - մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)
    - սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)
    - թվանշաններ
- *տեղաշարժել* Տեքստային ցուցիչը տեքստի մեջ
- *կատարել* տարրական ուղղումներ տեքստում
- *փակել* փաստաթուղթը
- *բացել* առկա փաստաթուղթը
- *իմանալ* Zoom գործիքի հնարավորությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, առնվազն 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղնաշարով Տեքստային Յուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք:

Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար
- *նշել* բառերը և տեքստային հատվածները
- *կատարել* մուտքագրված տեքստի պարզագույն *ֆորմատավորում*
- *կատարել* տողերի հավասարեցում
- *փոխել* միջտողային տարածությունները
- *փոխել* տեքստի գույնը Font Color գործիքով
- *փոխել* տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- *փոխել* պարբերության խորությունները լուսանցքներից
- *չեղյալ հայտարարել* (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- *վերականգնել* ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- *կրկնել* ֆորմատավորման վերջին գործողությունը
- Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ
    - փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ
    - ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը
    - ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ
- *պատճենել* տեքստը
- *տեղափոխել* տեքստը
- *տողադարձել* տեքստը
- *համարակալել* էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:

2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Փաստաթղթի պահպանում**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

- *իմանալ* փաստաթղթերի պահպանման իմաստը
- *պահպանել* նոր ստեղծված փաստաթուղթը
- *պահպանել* փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական աշխատանք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

- *պատրաստել* աղյուսակ
- աղյուսակի մեջ *մուտքագրել* տեքստ,
- *կատարել* ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ
- *ավելացնել* նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ
- *ջնջել* աղյուսակի տողերը և սյուները
- *փոխել* սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* աղյուսակի գծերի գույնը
- *գունավորել* աղյուսակի տողը և սյունը

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

1. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:

2. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5 Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում**

**<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>**

- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ
- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը
- *գծագրել* կանոնավոր պատկերներ
- *ֆորմատավորել* գրաֆիկական օբյեկտները՝
    - տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ
    - պատճենել
    - պտտել
    - շրջել
    - փոխել չափերը
- *խմբավորել* գրաֆիկական օբյեկտները
- *հավասարեցնել* գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ
- *գծագրել* տեքստային բլոկներ
- *գունավորել* գրաֆիկական օբյեկտները
- *երանգավորել* գրաֆիկական օբյեկտները
- *ստվերավորել* գրաֆիկական օբյեկտները

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

1. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:
2. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական աշխատանք 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Փաստաթղթի տպագրում**

**<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>**

- Նախադիտման ռեժիմում *թերթել* փաստաթուղթը
- *իմանալ* Print պատուհանի ֆունկցիաները
- *տպագրել* փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:
2. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով` անհատական համակարգիչների կաբինետում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ինտերնետում աշխատելու իմացություն

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

- *իմանալ* Ինտերնետ հասկացության նշանակությունը
- *ճանաչել* Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը
- *իմանալ* Ինտերնետային Հասցե հասկացությունը
- *իմանալ* History հրամանի նշանակությունը
- *իմանալ* Favorites հրամանի նշանակությունը
- *իմանալ* Stop հրամանի նշանակությունը
- *իմանալ* Refresh հրամանի նշանակությունը
- *իմանալ* Back և Forward կոճակների նշանակությունը
- *պատճենել* տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից
- *պատճենել* գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից
- *իմանալ* ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները
- ըստ չափանիշների *որոնել* ինֆորմացիա
- ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- *իմանալ* էլեկտրոնային փոստի նշանակություն
- *ուղարկել* և *ստանալ* էլեկտրոնային նամակներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:
6. Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ` օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:
7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների

կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ »

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ 3-08-001**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ոսկերչության արվեստի, դրա դերի ու նշանակության, զարգացման պատմության, ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքների, հարմարանքների ու սարքվորումների, դրանց դերի և նշանակության մասին:

**Մոդուլի տևողությունը՝** 18 ժամ

Տեսական պարապմունք 8 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԱԱՕ-3-08-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **իմանա հայրենական և օտարերկրյա ոսկերչության զարգացման պատմության հիմքերը.**
2. **ճանաչի ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքները, հարմարանքներն ու սարքավորումները և իմանա դրանց դերն ու նշանակությունը.**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ հայրենական և օտարերկրյա ոսկերչության զարգացման պատմության հիմքերը:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ներկայացնում ոսկերչական արվեստի դերն ու նշանակությունը.

բ. ճիշտ է ներկայացնում հայրենական ու օտարերկրյա ոսկերչության զարգացման պատմության հիմքերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվում է բանավոր հարց ու պատասխանի միջոցով, որի ընթացքում շոշափվում են ոսկերչության զարգացման հիմնական հարցերը:

Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ցուցադրական նյութեր, ոսկերչական իրերի պատկերներ, ըստ դարաշրջանների և երկրների ոսկերչության վերաբերյալ բնութագրիչ նյութեր և այլն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ճանաչել ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքները, հարմարանքներն ու սարքավորումները և իմանալ դրանց նշանակությունը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճանաչում և անվանում է ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքները, սարքավորումներն ու հարմարանքները,

բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր գործիքի, սարքավորման ու հարմարանքի նշանակությունը, կիրառման ոլորտը,

գ. ցույց է տալիս համապատասխան գործիքների ու սարքավորումների օգտագործման ձևը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարց ու պատասխանի, թեսթային հանձնարարության և գործնական կատարման հիման վրա: Թեսթի միջոցով ստուգվելու է, թե ուսանողը ինչպես է պատկերացնում գործիքների կիրառման տեղը ըստ ֆունկցիայի, իսկ գործնական կատարման միջոցով նա ցույց է տալու յուրաքանչյուր գործիքի, հարմարանքի և սարքավորման օգտագործման ձևը:

Ստորև ներկայացվում է ոսկերչության մեջ օգտագործվող հիմնական գործիքները, սարքավորումները և հարմարանքները.

- ոսկերչական սեղան
- ոսկերչական կշեռք,
- գլոցման ապարատ,
- դրոշմման հաստոց
- լարածգման ֆիլլեր
- փայլեցնող հաստոց
- ձուլման մեքենա
- մուֆելային վառարան
- կաղապարման սարք
- մոմերի սրսկման սարք
- անհատական օգտագործման գործիքներ և հարմարանքներ
- սարքահատման աշխատանքների գործիքներ
- հալեցման և զոդման հարմարանքներ
- բոր մեքենա

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հարցերի և թեսթի պատասխանները հիմնականում ճիշտ է, մասնակի թերություններով, իսկ գործիքների, հարմարանքների և սարքավորումների օգտագործման ձևը ճիշտ է ցուցադրվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գործիքներ, հարմարանքներ և սարքավորումներ, ցուցադրական նյութեր՝ դրանց օգտագործման ձևերի վերաբերյալ՝ ըստ բնագավառի:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ -3-08-002**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմամբ ոսկերչական իրի համար նախատեսված պահանջվող հարգանիշի համաձուլվածք ստանալու և այն ձուլակտորի վերածելու, կշռելու և գրանցելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 18 ժամ

Տեսական պարապմունք 6 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

**1.նախապատրաստի աշխատանքային սեղանը ձուլակտոր պատրաստելու գործողությանը.**
**2.ստանա պահանջվող համաձուլվածքը.**
**3.կշռի ստացված ձուլակտորը և կատարի գրանցում:**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Աշխատանքային սեղանը նախապատրաստել ձուլակտոր պատրաստելու գործողությանը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում ձուլակտոր պատրաստելու համար աշխատասեղանի կազմակերպման կարգը:
բ. ճիշտ է ընտրում մետաղական խառնուրդի բաղադրիչները և կատարում բաղադրիչների չափաքանակների կշռում.
գ. ճիշտ է որոշում հալման ջերմաստիճանը և եղանակը.
դ. ճիշտ է ընտրում ձուլակտոր պատրաստելու համար անհրաժեշտ գործիքները, օժանդակ նյութերն ու կաղապարը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանք և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե թեսթային առաջադրանքը և գործնական հանձնարարությունը կատարվում է անսխալ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքերի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ տեղեկատու գրականություն, ոսկերչական կշեռք, կշռվող նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 4 ժամ
Գործնական ուսուցում 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ստանալ պահանջվող համաձուլվածքի ձուլակտոր՝ չգերազանցելով նախատեսված կորուստի սահմանված չափաքանակը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. հալեցումը կատարում է անկորուստ.
բ. հալված մետաղը ճիշտ է լցնում կաղապարի մեջ.
գ. ստացված ձուլակտորը համապատասխանում է հարգանիշին.
դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել ձուլակտոր:

Այն բավարար կլինի, եթե հանձնարարությունը կատարվի ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

գործնական ուսուցում: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կշռել ստացված ձուլակտորը և կատարել գրանցում:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կշռում ձուլակտորը.
բ. համապատասխան գրանցումը ճիշտ է կատարում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կշռել ձուլակտորը և կատարել գրանցում:

Արդյունքը կգնահատվի բավարար, եթե հանձնարարությունը կատարվում է բացարձակ ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ գրանցման ձևաթղթեր: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել ոսկերչական արհեստանոցում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 2 ժամ

Գործնական աշխատանք 2 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ ԳԼՈՑՄԱՆ ԵՎ ԼԱՐԱՁԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ»**

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ -3-08-003**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային էսքիզից և տեխնիկական քարտից օգտվելու, գլոցման և լարաձգման համար նախատեսված գործիքներն ու սարքերն օգտագործելու, գլոցման և լարաձգման եղանակով տեխնիկական քարտում նշված չափերով և պրոֆիլներով նախապատրաստուքներ պատրաստելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 24 ժամ

Տեսական պարապմունք 2 ժամ

Գործնական աշխատանք 22 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **օգտվի աշխատանքային էսքիզից և կարդա տեխնիկական քարտը.**
2. **տարբերակի գլոցման և լարաձգման գործիքները, օժանդակ նյութերն ու հարմարանքները.**
3. **կատարի գլոցում և լարաձգում՝ պահպանելով մետաղի աշխատանքային մեխանիկական հատկությունները:**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Օգտվել աշխատանքային էսքիզից և կարդալ տեխնիկական քարտը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքային էսքիզի վրա գլոցման և լարաձգման եղանակով ստացված նախապատրաստուքներից պատրաստվող մանրակները:

բ. ճիշտ է կարդում տեխնիկական քարտում նշված՝ նախապատրաստուքների չափերը և պրոֆիլները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ու սանողին հանձնարարվելու է ըստ տարբեր բարդության էսքիզների կարդալ ոչ պակաս 4 տեխնիկական քարտ: Արդյունքի յուրացումը բավարար կհամարվի, եթե տեխնիկական քարտը ընդհանուր առմամբ ճիշտ է կարդում, սակայն հնարավոր են մասնակի, ոչ էական բացթողումներ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ոսկերչական իրերի աշխատանքային էսքիզներ, տեխնիկական քարտի նմուշներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 2 ժամ

Գործնական աշխատանք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տարբերակել գլոցման և լարաձգման գործիքները, սարքերը, օժանդակ նյութերն ու հարմարանքները, ընտրել դրանցից օգտվելու եղանակը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում գլոցման և լարաձգման սարքերը և նրանց օգտագործման ձևերը.

բ. ճիշտ է ընտրում լարաձգման համար նախատեսված օժանդակ նյութերը.

գ. ճիշտ է ընտրում օժանդակ հարմարանքները և դրանցից օգտվելու եղանակը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է կոնկրետ հանաձանարարականով ընտրի համապատասխան գործիքները:
Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե հանձնարարությունը կատարվում է անսխալ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 6 ժամ

**3ՈՒՆՔ 3 Կատարել գլոցում և լարաձգում:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ըստ աշխատանքային քարտի՝ ճիշտ է ընտրում գլոցման և լարաձգման սարքերի վրա գտնվող համապատասխան պրոֆիլի դռները և լարաձգման անցքերը.
բ. ճիշտ է կատարում գլոցման և լարաձգման գործողությունները:
գ. պահպանում է մետաղի ջերմային մշակման ռեժիմը.
դ. ստացված նախապատրաստուքները համապատասխանում են աշխատանքային քարտում նշված չափերին.
ե. նախապատրաստուքների աշխատանքային մեխանիկական հատկությունները պահպանված են.
զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողը պետք կատարի գլոցման ոչ պակաս 3, իսկ լարաձգման՝ ոչ պակաս 2 գործողություն: Յանձնարարությունը պետք է կատարվի լրիվ ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 14 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ -3-08-004**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ոսկերչական իրերի համար մանրակներ և նախապատրաստուքներ պատրաստել փականագործական եղանակով:

**Մոդուլի տևողությունը՝** 72 ժամ

Գործնական աշխատանք 72 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-003 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **կատարի չափանշման աշխատանքներ.**
2. **կատարի խարտման աշխատանքներ.**
3. **կատարի կտրման և հատման աշխատանքներ.**
4. **կատարի շաղափման և պարուրակման աշխատանքներ.**
5. **աշխատի նրբասղոցով.**
6. **կատարի ռանդման և հղկման աշխատանքներ.**
7. **կատարի զոդման աշխատանքներ:**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել չափանշման աշխատանքներ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում չափանշում կատարելու համար նախատեսված գործիքները և նրանց օգտագործման ձևերը:
բ. ըստ տեխնիկական էսքիզի՝ ճիշտ է կատարում չափանշման աշխատանքները:
գ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության չափանշման ոչ պակաս 3 գործողություն: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե հանձնարարությունը կատարվում է ճիշտ՝ մասնակի ոչ էական թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք, որը անհրաժեշտ է իրականացնել արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել խարտման աշխատանքներ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. տարբերակում է խարտոցների տեսակները.
բ. ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքին համապատասխան խարտոցներ:
գ. ճիշտ է օգտվում խարտման համար նախատեսված օժանդակ հարմարանքներից:
դ. ճիշտ է կատարում խարտման գործընթացը:
ե. արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին:
զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել տարբեր բարդության ոչ պակաս 3 խարտման գործողություն:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը ընդհանուր առմամբ կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել կտրման և հատման աշխատանքներ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. տարբերակում է կտրման-հատման համար նախատեսված գործիքներն ու հարմարանքները.
բ. ճիշտ է ընտրում մկրատների և հատիչների տեսակները՝ ըստ անհրաժեշտության.
գ. ճիշտ է ընտրում հատման համար նախատեսված օժանդակ հարմարանքները.
դ. ճիշտ է կատարում կտրման և հատման գործողությունը.
ե. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է տարբեր գործիքներով կատարել տարբեր բարդության ոչ պակաս 3 կտրման և հատման գործողություն:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը ընդհանուր առմամբ կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4 Կատարել շաղափման և պարուրակման աշխատանքներ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում շաղափման և պարուրակման համար անհրաժեշտ գործիքները և սարքերը, շաղափների և պարուրակների տեսակները, նրանց աշխատանքային ոլորտը, շաղափման և պարուրակման համար նախատեսված օժանդակ նյութերն ու հարմարանքները.
բ. ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ շաղափման և պարուրակման գործիքները, հարմարանքները, պտտման արագության ռեժիմը, օժանդակ նյութերը և սարքերը.
գ. ճիշտ է կատարում շաղափման և պարուրակման գործողությունը.
դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ընտրել գործիքները և կատարել տարբեր բարդության ոչ պակաս 3 շաղափման և պարուրակման գործողություն:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է բացարձակ ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**
Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**
Գործնական պարապմունք 8 ժամ
**ԱՐԴՅՈՒՆՔ 5 Կատարել աշխատանք նրբասղոցով:**
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. ճիշտ է ներկայացնում սղոցման համար նախատեսված գործիքները, հարմարանքներն ու օժանդակ նյութերը.
բ. ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքին կատարման հաար անհրաժեշտ նրբասղոցի չափերն ու աշխատանքի կատարման ձևը.
գ. ճիշտ է կատարում սղոցման գործողությունը.
դ. ժամանակին օգտվում է սղոցման համար նախատեսված օժանդակ նյութերից.
ե. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**
Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ընտրել գործիքները և կատարել տարբեր բարդության ոչ պակաս 3 գործողություն:
Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ՝ որոշ աննշան թերություններով:
**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**
Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**
Գործնական պարապմունք 8 ժամ
**ԱՐԴՅՈՒՆՔ 6 Կատարել ռանդման և հղկման աշխատանքներ:**
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. ճիշտ է ներկայացնում ռանդման և հղկման համար նախատեսված գործիքները, օժանդակ նյութերն ու հարմարանքները.
բ. ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ռանդող գործիքը և հղկման համար անհրաժեշտ համարի հղկաթուղթը, ռետինե սկավառակը (шлифовальный круг).
գ. ճիշտ է կատարում ռանդման և հղկման գործողությունը.
դ. ժամանակին օգտվում է անհրաժեշտ չափերի հղկաթղթից և ռետինե սկավառակից.
ե. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**
Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ընտրել գործիքները և կատարել տարբեր բարդության ռանդման և հղկման ոչ պակաս 3 գործողություն:
Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ՝ որոշ աննշան թերություններով:
**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**
Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:
**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**
Գործնական պարապմունք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 7 Կատարել զոդման աշխատանքներ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ա. ճիշտ է ներկայացնում զոդման համար նախատեսված գործիքները, հարմարանքները և օժանդակ նյութերը.
բ. ճիշտ է ընտրում զոդվող մետաղին համապատասխանող զոդանյութի տեսակը (լար, թիթեղ, փոշի, մածուկ) և հարգանիշը.
գ. ճիշտ է ընտրում զոդման համար նախատեսված ֆլյուսները և պատրաստում ֆլյուսային լուծույթներ.
դ. ճիշտ է կատարում զոդվող իրի յուղազրկումը թթուների լուծույթներում.
ե. ճիշտ է ընտրում զոդող գործիքների աշխատանքային և ջերմային ռեժիմը.
զ. ճիշտ է կատարում զոդման գործողությունը.
է. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ընտրել զոդման ձևը, նախապատրաստել և կատարել տարբեր բարդության ոչ պակաս 5 զոդման գործողություն:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ՝ որոշ աննշան թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 24 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԴՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ -3-08-005**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել դրոշմման եղանակով ոսկերչական շինվածքի նամրակներ պատրաստելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 24 ժամ

Տեսական պարապմունք 8 ժամ

Գործնական աշխատանք 16 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002, ՈՍԿ-3-08-003 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **իմանա դրոշմման հաստոցի աշխատանքի սկզբունքները, դրոշմում կատարելու համար նախատեսված հարմարանքները և գործիքները.**
2. **ընտրի դրոշմվող իրի համար նախապատրաստված մետաղյա թիթեղի հաստությունը, լարվածությունը ու հաստոցի աշխատանքային ռեժիմը.**
3. **կատարի դրոշմման գործողություն:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ դրոշմման հաստոցի աշխատանքի սկզբունքները, դրոշմում կատարելու համար նախատեսված հարմարանքները և գործիքները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում դրոշմման հաստոցի աշխատանքի սկզբունքները.

բ. ճիշտ է ներկայացնում դրոշմների աշխատանքի սկզբունքները, տարբերակում է դրոշմման հարմարանքները և գործիքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողը ընդհանուր առմամբ պետք է ցուցադրի իր իմացությունը դրոշմման հաստոցի վերաբերյալ:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում է ճիշտ պատասխան, հնարավոր են որոշակի թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական պարապմունք: Անհրաժեշտ է ունենալ դրոշմման հաստոցի հատուքի սխեման:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ընտրել մետաղյա թիթեղի հաստությունը և լարվածությունը, հաստոցի աշխատանքային ռեժիմը և դրոշմման հերթականությունը**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է ընտրում մետաղյա թիթեղի հաստությունը և լարվածությունը՝ կախված դրոշմվող մանրակի ձևից.
բ. ճիշտ է ընտրում հարվածող կամ սեղմող դրոշմման հաստոցի ուժային ռեժիմը՝ կախված մետաղյա թիթեղի հաստությունից:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողը ընդհանուր առմամբ պետք է ցուցադրի իր իմացությունը ըստ դրոշմի տեսակի թիթեղի հաստությունը և լարվածության ռեժիմը ընտրելու գիտելիքները:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում է ճիշտ պատասխան, հնարավոր են որոշակի թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3 Կատարել դրոշմման գործընթացը:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է կատարում դրոշմումը՝ պահպանելով դրոշմման գործողությունների հերթականությունը.
բ. պահպանում է դրոշմող հաստոցի աշխատանքային ռիթմը.
գ. դրոշմման ընթացքում պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է նախապատրաստել և կատարել միմյանցից տարբեր դրոշմման ոչ պակաս 2 գործողություն:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ՝ որոշ աննշան թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 16 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՁՈՒԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ 3-08-006**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կաղապարման և ձուլման եղանակով ոսկերչական իրի նախաշինվածքներ-մանրակներ պատրաստելու կարողություն:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 32 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **իմանա կաղապարման և ձուլման եղանակով ոսկերչական իրի նախաշինվածքի և մանրակների պատրաստման համար օգտագործվող նյութերը.**
2. **տարբերակի կաղապարման և ձուլման եղանակով ոսկերչական նախաշինվածքի մանրակների պատրաստման համար կիրառվող սարքավորումները, գործիքներն ու հարմարանքները.**
3. **պատրաստի ռետինե կաղապար.**
4. **կատարի ձուլամոմի սրսկում և մոմի մանրակներից ձուլածառի հավաքում.**

5. կատարի ձուլամոմի գիպսե կաղապարում.
6. կատարի կաղապարի ջերմային մշակում.
7. կատարի ձուլում:

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ կաղապարման և ձուլման եղանակով մանրակների պատրաստման համար օգտագործվող նյութերը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում ռետինե կաղապարի պատրաստման համար կիրառվող ռետինի տեսակները.
բ. ճիշտ է ներկայացնում ձուլամոմի տեսակները.
գ. ճիշտ է ներկայացնում գիպսե կաղապարման համար կիրառվող գիպսի տեսակները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:
Ստորև ներկայացվում է

ա/ ռետինի տեսակները
- սիլիկոնային ռետին
- ոչ սիլիկոնային ռետին
- կոշտ ռետին

բ/ ձուլամոմի տեսակները
- կոշտ
- փափուկ

գ/ գիպսի տեսակները
- վակուումային
- կենտրոնախույս

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե հարցերին ընդհանուր առմամբ տրվում է ճիշտ պատասխան:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ռետինի, ձուլամոմի և գիպսի տեսակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տարբերակել կաղապարման և ձուլման եղանակով ոսկերչական նախաշինվածքի մանրակների պատրաստման համար կիրառվող սարքավորումները, գործիքներն ու հարմարանքները.**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է տարբերակում ռետինե կաղապարի պատրաստման համար անհրաժեշտ սարքը, գործիքները և հարմարանքները.
բ. ճիշտ է տարբերակում ձուլամոմի սրսկման համար նախատեսված սարքը և օժանդակ հարմարանքները:
գ. ճիշտ է ներկայացնում գիպսե կաղապարման և ձուլման համար նախատեսված սարքերը, գործիքները, հարմարանքները և դրանց աշխատանքային գործընթացը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական ցուցադրման հիման: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում՝ գործնական ցուցադրման տարրերով: Նպատակահարմար է ուսուցումն իրականացնել արհեստանոցում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Պատրաստել ռետինե կաղապար:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է տեղադրում առաջնային նմուշը և հում ռետինը ռետինե կաղապար եփելու հարմարանքի մեջ.

բ. ճիշտ է ընտրում ռետինե կաղապար եփելու սարքի ջերմային և ուժային ռեժիմները.

գ. ճիշտ է պահպանում ռետինի եփման համար անհրաժեշտ ժամանակը.

դ. ճիշտ է կտրում ռետինե կաղապարը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել տարբեր բարդության 2 տեսակի ռետինե կաղապար:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ` որոշ աննշան թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կատարել ձուլամոմի սրսկում և մոմի մանրակներից ձուլածառի հավաքում:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ընտրում ձուլամոմի սրսկման սարքի աշխատանքային ռեժիմը.

բ. ճիշտ է կատարում ձուլամմի սրսկումը ռետինե կաղապարի մեջ.

գ. ձուլամոմի մանրակներից ճիշտ է հավաքում ձուլածառը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է սրսկել և հավաքել ձուլածառ:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ` որոշ աննշան թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել ձուլամոմի գիպսե կաղապարում**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է կատարում ձուլամոմի տեղադրումը կաղապարի մեջ.

բ. ճիշտ է ընտրում գիպսի և ջրի խառնուրդի չափաքանակը.

գ. ճիշտ է կատարում գիպսի շաղախման գործողությունը.

դ. ճիշտ ժամանակին է լցնում պատրաստված շաղախը կաղապարի մեջ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել 2 տեսակի գիպսե կաղապար:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է հիմնականում ճիշտ` որոշ աննշան թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կատարել գիպսե կաղապարի ջերմային մշակում**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ընտրում մուֆելային վառարանում գիպսե կաղապարի թրծելու ջերմային ռեժիմը.

բ. գիպսե կաղապարը ճիշտ է տեղադրում մուֆելային վառարանի մեջ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գիպսե կաղապարի ջերմային մշակում՝ ընտրելով համապատասխան ջերմային ռեժիմը:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 7. Կատարել ձուլում:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է կատարում թրծված գիպսե կաղապարի տեղադրումը ձուլման սարքի վրա.

բ. ճիշտ է կատարում ձուլման գործընթացը՝
- ճնշման եղանակով,
- կենտրոնախույս ուժի եղանակով,
- վակուումային եղանակով.

գ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել յուրաքանչյուր եղանակով 1-ական ձուլում:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ, հնարավոր են որոշ թերություններ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 10 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀՅՈՒՍՎԱԾՔԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ (ՖԻԼԻԳՐԱՆ) ԵՂԱՆԱԿՈՎ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ - 3-08-007**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել հյուսվածքային տեխնիկայի եղանակով ոսկերչական իրի մանրակներ պատրաստելու կարողություն:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 32 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002, ՈՍԿ-3-08-004 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. տարբերակի հյուսվածքային տեխնիկայի տեսակները, գործիքները և հարմարանքները.
2. ըստ աշխատանքային էսքիզի՝ պատրաստի մետաղական մանրաթելի հյուսվածքներով նախապատրաստուկներ.
3. ըստ աշխատանքային էսքիզի՝ պատրաստի մանրակների կոնտուրները, կատարի կոնտուրների լցոնում՝ հյուսված մանրաթելով.
4. պատրաստի մետաղական զնդիկներ:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տարբերակել հյուսվածքային տեխնիկայի տեսակները, գործիքները և հարմարանքները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում հյուսվածքային տեխնիկայի տեսակները.

բ. ճիշտ է տարբերակում հյուսվածքային տեխնիկայում օգտագործվող գործիքները և հարմարանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա:

Ստորև ներկայացվում է հյուսվածքային տեխնիկայի տեսակները.

- ցանցային
- ֆոնային

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հարցերին ընդհանուր առմամբ տրվում է ճիշտ պատասխան:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և ցուցադրական նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ըստ աշխատանքային էսքիզի՝ պատրաստել մետաղական մանրաթելի հյուսվածքներով նախապատրաստուքներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ընտրում մետաղական մանրաթելից հյուսվածք պատրաստելու հարմարանքները, գործիքները.

բ. ճիշտ է ընտրում տեխնիկական քարտում նշված մետաղական լարերը և պրոֆիլները.

գ. ճիշտ է կատարում մետաղական մանրաթելի ջերմային մշակումը.

դ. ճիշտ է կատարում մանրաթելով հյուսվածք պատրաստելու գործողությունը.

ե. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել ոչ պակաս 3 ձևի հյուսվածքաթելի նախապատրաստուկ:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ, հնարավոր են որոշ թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ըստ աշխատանքային էսքիզի՝ պատրաստել մանրակների կոնտուրները, կատարել կոնտուրների լցոնում՝ հյուսված մանրաթելով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ըստ աշխատանքային էսքիզի՝ ճիշտ է կատարում մանրակների կոնտուրների ծռում՝ համապատասխան ձևերով.

բ. ճիշտ է կատարում կոնտուրների զոդումը.

գ. ճիշտ է կատարում կոնտուրների լցոնումը հյուսվածքաթելով.

դ. ճիշտ է կատարում կոնտուրների և լցոնվածքի միազոդման գործողությունը.

ե. պատրաստված մանրակները համապատասխանում են աշխատանքային էսքիզին.

զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել ոչ պակաս 5 տիպի մանրակ:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 20 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Պատրաստել մետաղական գնդիկներ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. տարբերակում է մետաղական գնդիկներ պատրաստելու համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները.

բ. ճիշտ է ընտրում գնդիկներ պատրաստելու համար մետաղական լարի չափսերը.

գ. մետաղական լարը ճիշտ է բաժանում չափամասերի.

դ. ճիշտ է կատարում գնդիկ պատրաստելու գործողությունը.

ե. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել տարբեր չափերի գնդիկներ:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ՝ որոշ թերություններով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 6 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԻՆՎԱԾԻ ՀԱՎԱՔՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ 3-08-008**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ըստ աշխատանքային էսքիզի՝ զոդման, հոդակապային միացությունների և գամման եղանակով մանրակներից ոսկերչական իր հավաքելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Գործնական աշխատանք 36 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ -3-08-004 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. ըստ աշխատանքային էսքիզի՝ մանրակներից հավաքի ոսկերչական իր՝ զոդման եղանակով.
2. ըստ աշխատանքային էսքիզի՝ մանրակներից հավաքի ոսկերչական իր՝ հոդակապային միացություններով և գամման եղանակով:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել հավաքման աշխատանքներ՝ զոդման եղանակով:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է տարբերակում զոդման եղանակով ոսկերչական իր հավաքելու համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները.

բ. ըստ աշխատանքային էսքիզի ճիշտ է տեղադրում ոսկերչական իրի մանրակները՝ ըստ դրանց զոդման հերթականության.

գ. ճիշտ է ընտրում զոդման համար անհրաժեշտ զոդանյութը.

դ. ճիշտ է կատարում շինվածքի զոդման գործողությունը.

ե. ճիշտ է կատարում զոդված շինվածքի մաքրումը քիմիական նյութերով (սպիտակեցում).

զ. շինվածքի զոդված մասերը ունեն հուսալի ամրություն.

է. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել տարբեր բարդության առնվազն 5 շինվածք:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 24 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մանրակից հավաքել ոսկերչական իր՝ հոդակապային միացումներով և գամման եղանակով:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է տարբերակում հոդակապային և գամման եղանակով ոսկերչական իր հավաքման համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները.

բ. ըստ աշխատանքային էսքիզի ճիշտ է կատարում հոդակապային համադրումը, ճիշտ է ընտրում շարնիրների միացման համար անհրաժեշտ չափի ձողերը.

գ. ճիշտ է կատարում հոդակապային ձողերի գամման գործողությունը.

դ. հոդակապային միացությունները ունեն անհրաժեշտ շարժունակություն և հուսալի ամրություն.

ե. հավաքված շինվածքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին.

զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է հավաքել տարբեր բարդության առնվազն 5 իր:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական աշխատանք 12 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇԱԿՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ -3-08-009**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ոսկերչական իրի հավաքման աշխատանքներից առաջացած ավելորդուկների վերացման և գամված, զոդված տեղերի մշակման կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 24 ժամ

Տեսական պարապմունք 2 ժամ

Գործնական աշխատանք 22 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ -3-08-001, ՈՍԿ -3-08-004 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **ճանաչի ընթացիկ մշակում կատարելու համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները, նրանց օգտագործման ձևերը:**
2. **կատարի մշակման գործողություն՝ պահպանելով ոսկերչական շինվածքի էսքիզով նախատեսված տեսքը:**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. ճանաչել ընթացիկ մշակման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է տարբերակում ընթացիկ մշակման համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները.

բ. ճիշտ է ընտրում տվյալ իրի ընթացիկ մշակման համար անհրաժեշտ մանրախարտոցների տեսակները, ռետինե սկավառակային հղկիչները, հղկաթղթի տեսակները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողը պետք է իրավիճակին համապատասխան ընտրի գործիքները և հարմարանքները, հիմնավորի ընտրությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ցուցադրական նյութեր, գործիքներ, հարմարանքներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 2 ժամ

Գործնական աշխատանք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել ընթացիկ մշակման գործողություն:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կատարում ընթացիկ մշակման գործողությունը՝ պահպանելով ոսկերչական իրի արտաքին տեսքն՝ ըստ էսքիզի.

բ. գամված և զոդված տեղերն աննկատ են.

գ. աշխատանքը կատարված է անկորուստ.

դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել առնվազն 5 իրի ընթացիկ մշակման գործողություններ:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 20 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՔԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** ՈՍԿ 3-08-010

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողին տալ հիմնարար գիտելիքներ ոսկերչական քարերի տեսակների վերաբերյալ, ձևավորել ոսկերչական քարեր տեղադրելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Տեսական պարապմունք 8 ժամ

Գործնական աշխատանք 28 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-004 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **իմանա ոսկերչական քարերի տեսակներն ու դրանց քիմիական և մեխանիկական հատկությունները.**
2. **իմանա ոսկերչական քարերի տեղադրման, ամրացման համար նախատեսված ագուցների (каста-քարաբուն) տեսակներն՝ ըստ ոսկերչական քարերի տաշվածքի, դրանց ամրացման ձևերը.**
3. **ճանաչի ագուցների պատրաստման և մշակման, քարերի ամրացման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները և օժանդակ նյութերը.**
4. **կատարի ագուցների մշակում, քարերի տեղադրում՝ ըստ աշխատանքային էսքիզի, և քարերի հուսալի ամրացում.**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ ոսկերչական քարերի տեսակները, դրանց քիմիական և մեխանիկական հատկությունները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում ոսկերչական քարերի տեսակները, դրանց դասակարգումը և կարծրության աստիճանը.

բ. ճիշտ է ներկայացնում թթուների և բարձր ջերմաստիճանների ազդեցությունը տարբեր ենթախմբի ոսկերչական քարերի վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա:

Ստորև ներկայացվում է

ա/ ոսկերչական քարերի տեսակները

- թանկարժեք
- կիսաթանկարժեք
- արհեստական

բ/ ոսկերչական քարերի էական հատկությունները

- ջերմադիմացկանությունը
- կարծրությունը
- քիմիական նյութերի նկատմամբ կայունությունը

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ պատասխան է տրվում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, քարերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ ոսկերչական քարերի ամրացման համար նախատեսված ագուցների (каста-քարաբուն) տեսակներն՝ ըստ ոսկերչական քարերի տաշվածքի, դրանց ամրացման ձևերը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է տարբերակում ոսկերչական քարերի ամրացման համար նախատեսված ագուցների տեսակները.

բ. ճիշտ է ներկայացնում ագուցը և ամրացման եղանակն՝ ըստ ոսկերչական քարերի տաշվածքի:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է մասնագիտական գրականություն, ցուցադրական նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական պարապմունք 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ճանաչել ագուցների պատրաստման և մշակման, քարերի ամրացման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները և օժանդակ նյութերը:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է տարբերակում ագուցների մշակման համար անհրաժեշտ գործիքները՝ ելնելով քարերի ամրացման եղանակից.

բ. ճիշտ է ընտրում անհրաժեշտ հարմարանքները և օժանդակ նյութերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է հանձնարարականին համապատասխան ընտրի գործիքներ, հարմարանքներ, նյութեր: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հանձնարարությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և ցուցադրական նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.Կատարել ագուցների մշակում, քարերի տեղադրում՝ ըստ աշխատանքային էսքիզի, և քարերի ամրացում:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է մշակում ագուցները.

բ. ճիշտ է կատարում քարերի տեղադրման և ամրացման գործողությունը՝ հետևյալ եղանակներով՝

- խուլ ամրացման եղանակ
- կռապանային եղանակ
- ֆադան-գրիզանտային եղանակ (карнировочный метод)

գ. քարերը ամրացված են հուսալի և անվնաս.

դ. պահպանում է աշխատանքային անվտանգության կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել քարերի տեղադրման և ամրացման աշխատանքներ բոլոր եղանակներով: Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումը իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 28 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԱԽՇԱԶԱՐԴՈՒՄ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ 3-08-011**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ոսկերչական շինվածքի վերջնական մշակում և նախշազարդում կատարելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Գործնական աշխատանք 36 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002, ՈՍԿ-3-08-004 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **կատարի շինվածքի փայլեցում, մաքրում և լվացում.**
2. **ըստ աշխատանքային էսքիզի կատարի նրբարվեստ նախշազարդում փորագրման և դրվագման եղանակներով:**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել շինվածքի փայլեցում, մաքրում և լվացում:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է տարբերակում փայլեցման համար անհրաժեշտ գործիքները, սարքավորումները, օժանդակ հարմարանքները, փայլեցնող քսուկները, էլեկտրաքիմիական փայլեցման համար նախատեսված էլեկտրոլիզի անհրաժեշտ նյութերը:

բ. ճիշտ է կատարում փայլեցման գործողությունը՝

- մեխանիկական եղանակով,
- էլեկտրաքիմիական եղանակով.

գ. ճիշտ է կատարում փայլեցումից հետո շինվածքի արտաքին մակերեսին մնացած փայլեցնող քսուկներից շինվածքի մաքրման և լվացման գործողությունները:

դ. ճիշտ է չորացնում փայլեցված և լվացված շինվածքը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է փայլեցնել, լվանալ և մաքրել տարբեր եղանակներով պատրաստված 5 իր:

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ըստ աշխատանքային էսքիզի կատարել նախշազարդման աշխատանքներ՝ փորագրման և դրվագման եղանակներով:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. ճիշտ է ներկայացնում փորագրման և դրվագման եղանակները.

բ. ճիշտ է տարբերակում փորագրման և դրվագման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքներն ու օժանդակ նյութերը.

գ. ըստ աշխատանքային էսքիզի ճիշտ է կատարում փորագրման և դրվագման գործողությունը.

դ. կատարված նախշազարդերը նրբարվեստ են.

ե. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել դրվագման և 2 տեսակի փորագրման աշխատանքներ:

Ստորև ներկայացվում է փորագրման եղանակները.

- գրաֆիկական
- զարդանախշային

Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Գործնական ուսուցում: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 30 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄԱՔՐՈՒՄ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ»

**Մոդուլի դասիչը`** **ՈՍԿ 3-08-012**

**Մոդուլի նպատակը`**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը մաքրելու և կատարված աշխատանքը, ավելացած թանկարժեք մետաղի հետ, հանձնելու կարողություններ:

**Մոդուլի տևողությունը`** 18 ժամ

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 14 ժամ

**Մուտքային պահանջները`**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները`**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է`

1. **հավաքի արտահագուստի և ձեռքերի վրա մնացած թանկարժեք մետաղի փոշին, աշխատասեղանի վրա թափված թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը:**
2. **վերածի վերը նշված թանկարժեք մետաղը ձուլակտորի.**
3. **կշռի ստացված ձուլակտորը պատրաստած շինվածքի հետ, հանձնի և կատարի գրանցում:**

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Հավաքել արտահագուստի և ձեռքերի վրա մնացած թանկարժեք մետաղի փոշին, աշխատասեղանի վրա թափված թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ</u>

ա. ճիշտ է ընտրում արտահագուստը, ձեռքերը, գործիքները մաքրելու համար նախատեսված խոզանակները.

բ. անկորուստ է հավաքում թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով, որի ընթացքում ուսանողը պետք է ներկայացնի աշխատատեղի հավաքման հիմնական գործողությունները: Այն բավարար է, եթե գործողությունները ներկայացվեն ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատատեղի հավաքման վերաբերյալ հրահանգներ և կարգեր, հնարավորության սահմաններում` տեսաֆիլմ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Վերածել թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը ձուլակտորի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ա. ճիշտ է ընտրում թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը ձուլակտորի վերածելու համար անհրաժեշտ նյութերը և հարմարանքները.

բ. ճիշտ է կատարում ձուլակտորի ստացման գործողությունը.

գ. աշխատանքի ժամանակ պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները.

դ. աշխատախսեղանը մաքուր է, աշխատանքային գործիքները դասավորված:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կոնկրետ գործողություն խարտվածքը և կտորտանքը ձուլակտորի վերածելու համար:

Արդյունքի յուրացումը բավարար է եթե առաջադրանքը կատարված է ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Գործնական ուսուցում, կատարվում է արհեստանոցային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կշռել ստացված ձուլակտորը պատրաստված շինվածքի հետ, հանձնել և կատարել գրանցում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ա. պատրաստված ոսկերչական իրի և ավելացած ձուլակտորի քաշը և հարգանիշը համապատասխանում է գրանցումով ստացած թանկարժեք մետաղի քաշին և հարգանիշին՝ հաշվի առնելով քաշի կորստի թույլատրելի նորման.

բ. կատարված է պատրաստված ոսկերչական իրի և ավելցուկի հանձնման և ընդունման գրանցում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կշռել ստացված ձուլակտորը և կատարել համապատասխան ստուգումներ, ու գրանցումներ:

Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Գործնական պարապմունք: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 4 ժամ:

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** **ՈՍԿ 3-08-013**

**Մոդուլի նպատակը՝**

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կարողություններ վնասված ոսկերչական իրերը վերանորոգելու համար:

**Մոդուլի տևողությունը՝** 36 ժամ

Գործնական աշխատանք 36 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ-3-08-001, ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002, ՈՍԿ-3-08-003, ՈՍԿ-3-08-004, ՈՍԿ-3-08-005, ՈՍԿ-3-08-006, ՈՍԿ-3-08-007, ՈՍԿ-3-08-008, ՈՍԿ-3-08-009, ՈՍԿ-3-08-011 մոդուլները:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. **գնահատի ոսկերչական իրի վերանորոգման հնարավորությունը:**
2. **ընտրի տվյալ իրի վերանորոգման համար անհրաժեշտ տեխնոլոգիաները:**
3. **կատարի վերանորոգման համար անհրաժեշտ կոմպլեքսային աշխատանքներ:**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Գնահատել ոսկերչական իրի վերանորոգման հնարավորությունը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ա. գնահատումը կատարված է ճիշտ.

բ. պատվիրատուի հետ ձեռք է բերվել համաձայնություն վերանորոգման աշխատանքների կատարման ժամանակ հնարավոր ոչ դրական հետևանքների մասին՝ եթե այդպիսիք կարող են լինել:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է գնահատել ոչ պակաս 5 տարբեր իրերի վերանորոգման հնարավորությունը:

Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ վերանորոգման ենթակա տարբեր իրեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ընտրել տվյալ իրի վերանորոգման համար անհրաժեշտ տեխնոլոգիաները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ա. ճիշտ է ընտրված վերանորոգվող իրի համար անհրաժեշտ մետաղի համաձուլվածքը և ոսկերչական քարերը՝ եթե այդպիսիք կան.

բ. ճիշտ է ընտրված վերանորոգման համար անհրաժեշտ գործողությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է առաջադրել ոչ պակաս 5 տարբեր իրերի վերանորոգման տեխնոլոգիան:

Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ վերանորոգման ենթակա տարբեր տեխնոլոգիաներով պատրաստված իրեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել վերանորոգման համար անհրաժեշտ կոմպլեքսային աշխատանքներ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ա. ճիշտ է կատարված անհրաժեշտ կոմպլեքսային աշխատանքները.

բ. վերանորոգված մասը չի առանձնանում ոսկերչական իրի ընդհանուր տեսքից.

գ. վերանորոգված շարժական կամ զսպանակային մասերը կատարում են իրենց ֆունկցիան.

դ. պատվիրատուն գոհ է կատարված աշխատանքից.

ե. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել ոչ պակաս 5 տարբեր իրերի վերանորոգման աշխատանքներ:

Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ վերանորոգման ենթակա տարբեր տեխնոլոգիաներով պատրաստված իրեր: Ուսուցումն իրականացվում է արհեստանոցային պայմաններում:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական պարապմունք 24 ժամ